

## Յովհաննէս Հինդլեան (1866-1950)

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիրներէն մեծ մանկավարժը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ի գաղափարական ու բարոյական ականջներու հունաւորման մէջ, բախտորոշ ներդրում ունեցող հիմնադիրներու շարքին, իր առանձնայատուկ տեղը կը գրաւէ Յովհաննէս Հինդլեան, որ 16 Փետրուար 1950ին, Պոլսոյ մէջ հրաժեշտ տուաւ մեր աշխարհին:

Յ. Հինդլեան արդէն հաստատուած հեղինակութիւն էր 1918-ին, երբ Շաւարշ Քրիսեանի եւ Գրիգոր Յակոբեանի հետ հիմը դրին Հ.Մ.Ը.Մ.-ի, իբրեւ միաժամանակ մարզական եւ սկսողական կազմակերպութիւն, որուն նպատակն էր ի մի բերել եւ ազգային-քաղաքական վսեմ գաղափարներու դրօշին տակ համախմբել մինչ այդ Պոլսոյ մէջ թէ հայաշխարհի տարածքին առաջացած հայ մարզական եւ սկսողական միութիւնները:

Հինդլեան ծնած էր 1866-ին՝ Պոլիս: Նորահաստատ «Պէրպէրեան» վարժարանի անդրանիկ եւ շնորհալի սաներէն էր, որ կանուխէն նետուեցաւ մանկավարժական ասպարէզ՝ իր ժամանակի ազգային ամէնէն յառաջադէմ գաղափարներով սերունդ հասցնելով:

Նորահաս սերունդը ազգային ոգիով եւ գաղափարական ու բարոյական վսեմագոյն արժէքներով դաստիարակելու առաքելութեան ամբողջապէս նուիրուած մեծ մանկավարժը, 5 Հոկտեմբեր 1909-ին, 1908-ի Օսմանեան Սահմանադրութեամբ հաստատուած համեմատաբար ազատ գործունէութեան պայմաններէն օգտուելով, Գալուստ Մալաթեանի հետ գործակցաբար հիմը դրաւ Պոլսոյ հայոց «Նոր Դպրոց» վարժարանին:

Յովհաննէս Հինդլեան արդարօրէն Ուսուցչապետ հռչակուեցաւ իր ժամանակակիցներուն կողմէ: Եւ պատահական չէր, որ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան իր յառաջատար մասնակցութիւնը բերելով՝ Հինդլեանի ներդրումը մեծ եղաւ նորաստեղծ կազմակերպութիւնը «Բարձրացիր՝ Բարձրացուր» նշանաբանով զինելու գործին մէջ:

Շեշտը դնելով «առողջ մարմնի մէջ առողջ միտք» մշակելու հրամայականին վրայ՝ Հինդլեան եւ իր ընկերները Հայաստանի ու հայութեան պաշտամունքը կիզակէտը դարձուցին իրենց հիմնադրած համահայկական շարժումին: Տակաւին նոր կազմուած՝ յատուկ առաքելութիւն ուղարկեցին Երեւան, որպէսզի նորահաստատ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ անհարժեշտ համակարգումը առաջացնեն: Եւ այդպէս ալ եղաւ:

Քեմալականութեան «յաղթարչաւ»էն եւ Մեղ Եղեռնէն վերապրած հայութեան երկրորդ տարագրութենէն ետք, Յ. Հինդլեան մնաց Պոլիս եւ մինչեւ մահ, իր հիմնադրած Պոլսոյ «Նոր Դպրոց»ով, հաւատարիմ մնաց իր պաշտած արժէքներով սերունդ հասցնելու առաքելութեան:

Պոլսոյ հայութիւնը ազգային մեծ շուքով կատարեց արժանաւոր Հայ Ուսուցչապետին թաղումը: